

13

Ա. ԱՅԱՐՈՆԵԱՆ

148

Ա Ն Դ Ո Ւ Ն Դ Ը



Թ Ի Յ Լ Ի Ս

ԷԼԵՑԻՃԱՐԸ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՅԱՆ. ՊՈԼՆՈՎ. 7
1910

891.99

Կ-42

W-42

13 JUN 2005

19 NOV 2010

Ա. ԱՅԱՐՈՆԵԱՆ



ሠ ነ ገ በ ኩ ነ ገ ደ

148

~~2134~~

Þ þ ß ı ı ı

ԷԼԷԲՏՐԱԶԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ, 7.

1910

405 JUL 13 2003 JUL 13

405 JUL 13 2003 JUL 13

Հ Բ Ն Գ Ո Ր Յ ՈՒ

Ա Ն Դ ՈՒ Ն Դ Ը



I

Ուժասպառ ու յողնած՝ նա նստեց ա-
մայի ծովափին.

Շատ էր քայլել...

Ընկաւ աւազի վրայ ինչպէս փլշող ա-
լիք, գրկեց ծնկները և պղտոր հայեացքը
ուղղեց դէպի անորոշ հեռուն: Ոչինչ չէր
տեսնում, նայում էր այնպէս՝ ինչպէս կը
նայեն, երբ մի թանկագին էակ անդառնա-
լի կերպով ծածկւում է հեռաւոր մշուշի
մէջ:

Եւ նրա յետևում ախտաւոր ու ջրւտ՝
հսկայ քաղաքն էր մոմուում. առջևը՝ հեռուն,
անծայրածիր ծովն էր ծրփծփում:

Աշնան երեկոյի հովը կրքոտ հպումով
խաղում էր ջրերի հետ, հազար-հազար ման-
րիկ, փրփրուն կոհակներ վազում էին դէ-
պի ափերը, թաւալ տալիս խճերի վրայ լո-
ղացող մանուկների պէս ու յետ էին փախ-
չում քրքշալով:



3529-2002

Ծով ու երկինք տակաւին լողում էին վերջալոյսի արնագոյն ցլօքերի մէջ, որոնք կամաց-կամաց գունատում, քաշում էին լեռնակատարներէց՝ տեղի տալով մօտեցող մառախուղին:

Ստուերները մեղմիւ իջան, որպէս դա-
բանակալ դաւադիրներ, այլանդակօրէն ձգ-
ւեցին երկրի ու ծովի վրայ և նրանց լայն
քղանցքների ծալքերում, որպէս հսկայական
պատանի մէջ մեռան լոյսերը առանց բո-
ղոքի և առանց սուգի:

Ճայերը վերջին անգամ ճչացին վըշ-
տոտ, երկար ու կորան հեռաւոր եղեգ-
նութների մէջ:

Նաւերի ու նաւակների առագաստներն
ու կայմերը շուող թռչունների պէս կամացուկ
լուծուեցին մշուշի մէջ: հեռու, հեռու ծովի
խորքերում մէկը ցաւագնօրէն տնքաց ու
լռեց: Մառախուղը ծովից բարձրացաւ, թանձ-
րացաւ և խաւարի հետ եղբայրացած՝ հոսա-
նուտ ծալքերով իջաւ, իջաւ, պարուրեց
շրջակայքը:

Մարդն իր տեղումն էր, միշտ ծնկները
գրկած և հայեացքը դէպի անորոշ հեռուն:

Եւ նրա շուրջը ծովի պէս անհուն,
ծովի պէս խորը մի թախիծ իջաւ խաւարի
հետ՝ վաստակաբեկ ու մռայլ կեանքի վրայ,

քրտնաթոր ու խոշտանգուած խոնջանքը,
ծանրացած բազուկները կախ՝ ծունկի ե-
կաւ, ապա կռացաւ, դրեց մայր երկրի կրծ-
քին իր յոգնած գլուխը. երկնքից նրա վրայ
թարթեց առաջին աստղը:

Ծովի խորքում դարձեալ մէկը տնքաց
երկանր, ցաւագին ու լռեց.

Այն կեանքի անքուն ցաւն էր՝ հեծե-
ծում վաղուայ երկիւղից...

Մարդը լսեց այդ հեծեծանքը և նրա
գլուխը մեղմիւ քաշ ընկաւ կրծքին...

Աւագը խշխշաց, մի երիտասարդ և մի
մատաղ կին բաղեղի պէս իրար փարած՝ ան-
ցան ու լուծուեցին խաւարի մէջ տաք համ-
բոյրի ձայնը խառնելով ալիքների շրշիւնին:

Մարդը մի վայրկեան յետ նայեց նրանց,
ապա կրկին ուղղուեց և հայեացքը վերստին
դէպի հեռուն, նայում էր և ոչինչ չէր տես-
նում: Նա ասես մեխուած էր իր տեղում:

Մի ամսից ի վեր, քաղաքում անընդ-
հատ թափառելուց յետոյ, յոգնած ու յու-
սաբեկ, նա գալիս էր այստեղ՝ ծովափը,
նայում էր նոյն դիրքով, նստում էր ան-
թարթ դէպի հեռուն, մինչև որ խաւարը
պարուրում էր աշխարհը: Ինչո՞ւ էր դէպի
ծովը գալիս, և ի՞նչ գաղտնի ձեռք էր մը-
ղում նրան յատկապէս դէպի նոյն տեղը:

նա ասել չէր կարող, բայց հոգին այստեղ
թեթևանում էր: Յիշում էր, որ նաևից ա-
ռաջին անգամ այստեղ ավի դուրս եկաւ,
այստեղ առաջին անգամ ոտք կոխեց այն
ցամաքը, ուր եկել էր այնքան հրապուրիչ
երազներով, որոնք այնպէս վաղ պիտի
ցնդուէին, որպէս վաղորդեան շամանդաղը
արևի առաջին շողերի տակ:

Ծովի հետ մէկտեղ՝ նա խորհում էր և
կ'ուզէր լուծել իր կեանքի դաժան առեղ-
ծուածը, որ ծփծփում էր այդ անհանգիստ
ալիքների մէջ: Եւ նա ինչ սիրով կ'ուզէր
պատմել այս հինաւուրց վնուկին իր կեան-
քը, իր ամբողջ կեանքը, պատմել և ձգալ՝
«ասա, ծով, ինչո՞ւ այսպէս. տես, երկաթ
բազուկներ ունիմ և հզօր կուրծք ու թի-
կունք, ես այնպէս եմ ուզում աշխատել, և
այնպէս գիտեմ աշխատել. քանի հոգի են
ինձ սպասում, աչքերը դրանք, ախր եթէ
ստեղծուել են, պէտք է ապրեն, այնպէս
չէ... ախր մեծերն են ասել, «երբ Աստ-
ուած ստեղծում է մարդուն, ապրուստն էլ
հետն է ստեղծում». ապա ո՞ւր է նրանց
ապրուստը. ո՞ւմ մօտ, ո՞ւմ ձեռքին, փրնա-
րում եմ, դռներ եմ բաղխում, բազուկներս
ու թիկունքս եմ առաջարկում, չը կայ, չը
կայ... ասա, ծով, ինչո՞ւ այսպէս...»:

Երջանիկ զոյգը յետ եկաւ. դարձեալ
աւազները իշխշացին, դարձեալ լսուեց տաք
համբոյրների ձայնը...

Մարդն այս անգամ յետ չը նայեց, նա
խօսում էր ծովի հետ. ալիքները ուժգին
թափով եկան և նրա ոտների առաջ փշրուե-
ցին տնքալով:

«Ասա, ծով, ի՞նչու այսպէս... ի՞նչու
ես տնքում խաւարի մէջ...»

Ծովը լռեց:

Նա գլուխը քաշ ձգեց, մօտիկ անցեալի
յուշերը, պատկերները պաշարեցին նրա
երևակայութիւնը. բոլորն էլ հրապուրիչ ու
վշտոտ, բայց այնքան հեռու, որքան այս
անեղը ծովի հորիզոնը և այնպէս անհաս,
որպէս այս խաւարի մէջ փախչող ալիքներն
իրենց սև գաղտնիքներով:



II

Այդ պատկերները... նա աչքերը փակեց ու երագում էր...

Փոքրիկ մըռտ խոճիթի մէջ՝ պառաւ մայրը մանում էր մի հին ճոճուան ճախարակ, որ այնպէս լաւ էր, այնքան սիրելի: Շատ պառաւ մայրեր էին ձիթել նրա աւանջները, ձգձգել, ձիթել նրա լարերը, ուղղել, մաքրել նրա իրիկը և մանել, մանել...

Եւ այժմ իր մայրն էր մանում.

Սպիտակ բամբակի պատրոյգները նրա չորացած մատներին արանքից հոսում, փաթաթւում էին իրիկին, ապա ճերմակ, բարակ թելը ձիւնեղէն շերտով գնում էր պարուրելու վրիակը և կաժն էր կազմւում:

Եւ մայր ու ճախարակ երգում էին միասին:

Ճախարակը ճոռում էր լալագին և մայրը երգում էր մի հին վշտոտ երգ, որ ոչ սկիզբ ունէր և ոչ վախճան: Անծայր ու խորունկ

հառաչանքի մի կտոր էր այն երգը, դարաւոր զուլումի երգը, որ անհուն ժամանակներից հնչւում է աշխարհի վրայ և որի մէջ միշտ լալիս էր տրորուած, անգոր խեղճութիւնը, կորած գոյութիւնների հոգեմաշ աշխատանքը և անճարակ ցաւը թոյլերի, որոնք փշրւում են հզօրների երկաթ կրունկների տակ, փշրւում են և խոյս տալիս հայրենի երկրից վտարանդի, հալածական, քաղցած.

«Սև սարերից դումանն իջաւ դաշտերին:

«Անուշ հաւքեր, ուր է գնում ձեր ձանքան,

«Զուլումն եկաւ, ցաւը տիրեց աշխարհին,

«Ղարիբ հաւքեր, թռէք, անցէք անդուման.

«Սև սարերից դումանն իջաւ դաշտերին,

«Ո՞վ է լալիս հօնքուր հօնքուր, էն ձորում.

«Անճար եղնիկ, մատաղ աչքիդ արցունքին,

«Ո՞ր չար ձեռքից նետը դիպաւ քո սրտին»...

Եւ պառաւ մօր հետ լալիս էր ճախարակը, հեծեծում, տնքում...

Եւ ճախարակի հետ մէկտեղ լալիս էին այնքան պառաւ մայրեր, որոնք մի օր ծեր,

անգոր ձեռքերով դարձրել էին նրա թևը, շտկել իլիկը, երգել կարիքն ու անճարակ, անյոյս ցաւը մի մրոտ խրճիթի մէջ: Բոլոր այդ մայրերը՝ կորած, անթիւ սերունդների ողբասացներ, նոյնպէս վշտահար, նոյնպէս փշրուած խեղճութեան ծանր բեռի տակ, դուրս էին գալիս իրենց գերեզմաններից, մեղմիւ շարւում էին խրճիթի պատերի տակ, ձայնակցում էին այս պառաւին, որ երգում էր հին, լաւ երգը, և մանում էր հին, լաւ ճախարակը:

Լացով էր դառնում թևը ճախարակի, լացով թանձրանում թեյն իլիկի վրայ, յետոյ կտաւ դառնում, արցունքի պէս մաքուր, սպիտակ կտաւ, որ պիտի ծածկէր գեղջուկ մերկութիւնը, պիտի պատանէր մեռելներին հողի տակ:

Երեսուն տարի առաջ այրիացած մայրը իր մինուճար որդու՝ Արութի սիրուն, ծունկը ծալել էր իր տանը նստել, սև մազն սպիտակ հիւսել, մանել էր, մանել... որ գաւակը հասնի, օջախը վառ պահի, առաստաղը սեւացնի, իր ծեր օրերին նեցուկ դառնայ: Եւ երեսուն տարի շարունակ մայր ու ճախարակ միասին վաստակել էին, լացել ու ժպտացել, երգել ու տխրել:

Արութը սիրում էր մօրը, նրա վաղա-

ժամ կնճիռներով պատած անուշ դէմքը, նրա մեղմ աչքերը, որոնցից վիշտ ու սէր էր կաթկաթում, նրա քնքոյշ ու դարդոտ ձայնը, որ հնչում էր խրճիթում լացող հողմի պէս: Սիրում էր այն ամենը, ինչով այդ վաստակաբեկ, վշտահար կինը ապրել էր այնքան տարիներ, սիրում էր նրա ճախարակը, նրա ճռոցը, և հայրենի, աղքատիկ, մրոտ խրճիթը: Եւ մայր ու ճախարակ, խրճիթու թոնիր, գոմ ու աքաղաղ, նրա գլխում միացել, դարձել էին մի գրաւիչ ամբողջութիւն և բոլորի վրայ, ամեն առաւօտ, որպէս երկնային օրհնութիւն, որպէս մայրական աղօթքի մրմունջ, բարձրանում էր և դալարւում հայրենի տան ծուխը պալան — պալան:

Յետոյ այդ ամենի վրայ աւելացաւ իր կինը, իր գեղանի Ծովիկը, որի գեղեցկութեան հրապոյրը փայլ տուեց մռայլ խրճիթին և պառաւ մօր կնճիռների վրայ խաղաց որպէս վաղորդեան արևի ցոլքը: Ապա խրճիթը կենդանացաւ երեխաների ձայնով, որոնք հետզհետէ աշխարհ գալով, իրենց հետ բերին ցնծութիւն ու կեանք:

Մայրը թխում էր, եփում ու յետոյ մանում էր իր ճախարակը, Ծովիկը կարում էր, կարկատում, իսկ ինքը՝ Արութը աշխա-

տում էր դաշտերում, որ երեխաները խաղան, երգեն, զուարճանան ու աճեն...

Եւ լաւ էր, լաւ էր այդ բոլորը...

Գիւղը զուլում շատ ունի. կարկուտ ու վաշխառու, հարկ ու մտրակ, երաշտ ու հեղեղ, մորեխ ու կալուածատէր-բէգ: Մենակ մարդ էր, մենակութեան տէրը մեռնի.

«Բազի ու սագի ձագն էլ,

«Թող լճերում մենակ չը'լնի...»:

Գիւղն անիծած է... Միշտ տրորուած ու իրաւագոյնի, նա էլ կատաղաբար տրորում է ու զրկում իր ծոցում եղած թոյլերին, անգորներին, անճարներին:

Վայ խեղճին...

Մենակ մարդ էր, թե ու թիկունք չ'ունէր. ծեծում էին՝ ջուրը կտրում, արտը չորացնում, ծեծում էին՝ հարկը երկուտակ առնում, ծեծում էին՝ կալից ցորենը քաշում բէգի ծառաները. ծեծում էին հէնց այնպէս՝ երբ հարկաւոր էր մէկին ծեծել ու բանտ նետել... չէ՞ որ բանաւ նրա համար է որ մէջը մարդ լինի...

Անողորմ գիւղ...

Այնտեղ գլուխ թափելու համար կամ պէտք է գրպանի ոյժ ունենալ, կամ բռնունքի. Արութը չ'ունէր ոչ մէկը և ոչ միւսը. մենակ էր և աղքատ:

Ուտող բերանները տանը շատացան, նա չարչարում էր ինչպէս աւազի վրայ թրքալրտացող ձուկը, բայց պարտքը աճեց, հողը քչացաւ, կարկուտն ու երաշտը վրայ-վրայ լրացրին ֆացածը: Ճախարակը մանում էր հա մանում, բայց պառաւած մօր թոյլ բազուկները հազիւ էին դարձնում նրա թեւը և աչքերն էլ չէին ջոկում թելի հաստն ու բարակը. դեղանի Ծովիկը գլուխը քաշ կարում էր հա կարում, բայց ձմրանը ալիւր չը կար և պարտատէրը աւելի և աւելի յաճախ էր թրխկացնում նրանց դուռը: Այդ թրխկոցը... միշտ վաղ առաւօտեան, դեռ աչքը չը բացած, դեռ երեսը չը լուացած, դեռ դէպի աղօթարանը երեսը չը խաչակնքած: Եթէ նա, այդ անիրաւ պարտատէրը կէսօրին գար, երեկոյեան գար, այնքան ցաւ չէր լինի, բայց վաղ առաւօտի բարիւրոյսին, նրա թրխկոցը հնչում էր որպէս սև անէծք, որ նստում էր ամբողջ օրուայ աշխատանքի վրայ:

Հոգու աղքատի օրն անիծած...

Արութը կամաց կամաց մոռայուեց, թափառեց մեն-մենակ, մտածեց, ելք էր փնտրում և ելք չը կար: Եւ մի օր նա տուն եկաւ, կանգնեց խրճի մէջ տեղում.

— Ես գնում եմ, մայրիկ, ասաց, էլ չի

ապրւում. գնում եմ գլուխս սար ու քարի տալու. տղամարդ եմ չէ՛ք և աշխարհը լայն է... մանիր քանի կըլգես, խեղճ պառաւ, էլ բան չի դուրս գայ. երեխաները թոնիր ձը-գես մշահոտ չի գայ, ձմրանը հաց չը կայ, աշնան հարկը հեռու չէ, պարտատէրը վաղն էլի դուռը կը թրխկացնի, տուր թող տանի էն կովը և ես... գնում եմ. աշխարհը լայն է, չէ՛ք...

Շուարած մայրը ճախարակը թողեց և ձեռքերը ծնկներին ձգեց. Ծովիկը գլուխը բարձրացրեց, երկիւղի հետ խառն խանդա-ղատանքով ամուսնուն նայեց, ապա ե-րեք հայեացքներն իրար հանդիպեցին և լռե-լեայն հասկացան իրար...

— Ախր դարիպուծիւն... տէրը մեռնի... ես ինչ գիտեմ, հազար ու մի խեր ու շառ... էլի էս տեղ... Աստուած ողորմած է... բոլոր դռները խօմ չեն փակուի մեր առաջ... կու-րանան աչքերս... և երկու կաթիլ արցունք իջան, իջան ու կորան պառաւի կնճիռների մէջ:

Ծովիկը լուռ էր և կամացուկ ձեռքը աչքերին տարաւ ու սրբեց:

— Մայրիկ, Աստուած մեհակ մարդու Աստուած չի. գիւղն անիծած է, կամ փող պէտք է ունենաս այստեղ, կամ բռունցք

գլուխ թափելու համար. ախպէր չ'ունիմ, փող կը ձարեմ. քչէ՛րն են գնացել մարդ դարձել. Մնօր տղան երէկ մէկ էլ օր եկաւ, ին-չէ՛ր էր պատմում, տղամարդի համար վաս-տակի հազար ճամբայ կայ... Շուտ կը գամ.

— Ախր դարիպուծիւն... հազար ու մի խէր ու շառ, որդի...

— Էլ չի ապրւում, եղաւ պատասխանը:

Ծովիկը այն օրը շատ լաց եղաւ. երե-խաներն իրար նայիցին եղնիկի անմեղ աչ-քերով և բարձրաձայն հեկեկացին, մայրը կծկուեց, փոքրացաւ իր ճախարակի տակ ու լռեւեայն քամեց արցունքները, Արութը զըս-պեց իրեն... տղամարդ է՛ր... և գնաց...

— Նաւը՝ մի ահագին հրէշ, կանգ առաւ մեծ քաղաքի ծովափին, Արութին ուրիշ շատ շատերի հետ ցամաք շարտեց և յետ դար-ձաւ, մռնչալով գնաց կորչելու հեռու հորի-զոնում: Արութը քնաց կանգնած և մի ա-հագին վիշտ՝ ծանր ու սև համակեց նրա հոգին այս անծանօթ ցամաքի վրայ, ուր ամեն ինչ այնպէս սառն էր, անողորմ ու խորթ. նրան շփոթում էին և՛ կեանքի պայ-քարով բռնուած այս կատաղի ամբոխը, և՛ այս ահագին, խոժոռ ոստիկանները, և՛ ճը-շացող, աղմկուող բեռնակիրները, որոնք

քաջքշում էին հասած ճամբորդներին:

Յետ նայեց դէպի հեռացող նաւը և հայեացքի մէջ մխում էր ամպստանքն ու ցաւը. ու թւում էր նրան, թէ այդ նաւը անդառնալի կերպով իր հետ տարաւ նրա վերադարձի, նրա երջանկութեան յոյսը, տարաւ նրա հայրենի տունը: Երկար նայում էր և քանի հեռանում էր նաւը, նրա երկիւղն ու յուսահատութիւնն աւելի էր աճում, ու կ'ուզէր ճշալ անագին ձայնով, աղաչել, լալ, որ նա կանգ առնի, յետ դայ իրան տանելու... նաւը անտարբեր ու անողորմ սլանում էր մոնչալով ջրերի վրայ, նրա կողերի տակ ալիքները փրփրում, եռում էին և անագին, մուգ զանգուածը կամաց կամաց լուծւում էր մանուշակ մշուշի մէջ... Եւ ծածկուեց:

Այնուհետև դեռ երկար շուարած մնացել էր Արութը, շշկած այծեամի պէս չորս կողմն էր նայում ասես փախուստի ճանապարհ որոնելով, տկան ջներում հնչւում էր նաւահանգստի ժխորի աղմուկը, անորոշ, անհասկանալի մոմռոցը, ապա երբ կամաց կամաց բազմութիւնը քաշուեց, նա շալակեց իր պարկը և դանդաղ, յամրաքայլ ընթացքով կորաւ փողոցներից մէկում:

Պէտք էր շուտով գործ գտնել, փող վաստակել և շատ, շատ փող...

III

Եւ մի ամիս շարունակ նա գործ էր փնտրել. բաղխել էր բոլոր գործարանների դռները, կանգ էր առել բոլոր մեծ վաճառատների առաջ, դիմել էր փողոցով անցնող ամեն մի լաւ հագնուած մարդի և միշտ ձեռնուռնայն, միշտ մերժուած: Ոստիկանները նրան հրհրել, հայհոյել էին, անցագիր պահանջելիս. դռնապանները ծաղրել, կառքերը դիպել էին, դէն շարտել և ամենքը կարծես խօսք մէկ արած՝ ուխտել էին ժամ առ ժամ փետել նրա լաւ յոյսերը: Արութն զգում էր, թէ ինչպէս օր աւուր ոտները թուլանում են, բազուկները անմտօրէն քաշ ընկնում և երկարում, ու սիրտը ճմլւում էր անորոշ վախից ու յուսաբեկութիւնից:

Արութը կորչում էր...

Նա թափառում էր ամբողջ օրը, յաճախ քաղցած, միշտ դառնացած ու անհանդիստ, ապա երեկոյեան ուժասպառ, յուսա-

հատ զնում էր դէպի ծովափ ասես գտնելու այն նաւը, որ նրան այսպէս անսիրտ կերպով շարաւելէր այս անհիւրընկալ, քարսիրտ քաղաքը:

Եւ նաւը չը կւնր, չը կւնր...

Այս երեկոյ նա դարձեալ ծովափումն էր, դարձեալ նայում էր հեռուն ու անծայր թախիծը համակել էր նրա հոգին: Հայրենի պատկերները մառախուղի պէս եկան անցան աչքի առաջից, և Արուսիկն թողին իր տեղում: Նա էլ ոչինչ չէր մտածում, օրօրում, տարու բերում էր անորոշութեան մէջ, ինչպէս ալիքն անեղր ծովում: Եւ անդգայօրէն՝ նա նախ թեք ընկաւ նստած տեղում, ապա ամբողջ մարմնով ձգուեց, փռուեց աւազի վրայ, ձեռքերը գլխի տակ, և աչքերը յառած աստղերին: Ծովափի ճրագները մէկիկ-մէկիկ վառուեցին և երերուն ցոլքեր էին արձակում ջրերի մէջ: Ալիքները գալիս փշրում էին ափին և նրանց ձայնը օրօրում էր Արուսիկն երագներին մէջ: Նա այնպէս կ'ուզէր մնալ այսպէս անշարժ, հալուել, լուծուել մայր երկրի հետ, այլ ևս ոչինչ չ'զգալ, ոչինչ չը խորհել:

Ժամեր անցան, խաւարը թանձրացաւ, աստղերը եկան բոյլերով, լողում էին ջրերի մէջ, թրթռում, խաղում արծաթափայլ ձրկ-

ների պէս և Արուսիկն ոյժ չ'ունէր վերկենալու, անուշ թմրութիւնը բռնել էր նրա ամբողջ էութիւնը և նա աչքերը խուփ՝ օրօրում էր վշտոտ անուրջների մէջ:

Աւագը շատ մօտիկ խշխշաց. յանկարծ մէկը կանգնեց նրա գլխավերեւը, ապա կռացած՝ նայում էր նրա դէմքին, ըստ երևոյթին իմանալու համար քննած է, անթույն, թէ՛ մեռած:

Արուսիկն աչքերը բացեց՝ նայում էր:

— Հը... բանդ լաւ չի երևում, բարեկամ, ասաց անծանօթը:

Արուսիկն լռութեամբ նստեց. նրա առաջ կանգնած էր մի կարճահասակ մարդ, որի դէմքը սակայն տեսնել չէր կարողանում:

— Տօ, մի ձայն տուր, ոտքի ել, հիւանդ չեմ, ի՞նչ ես շինում այստեղ այս չար ժամին. կրկնեց անծանօթը:

— Ե՛ս... չէ, ես հիւանդ չեմ... հէնց այնպէս պարկել եմ... Արուսիկն եմ, X... գիւղացի... պարկել եմ ինձ համար... միտք եմ անում, պատասխանեց Արուսիկն շփոթուած, ու ոտքի ելաւ, ձեռքը բնագոյրէն դէպի դուրս պանր տանելով, ուր իր վերջին մի քանի ըուբլիներն էին:

— Արուսիկն ե՛ս... պաքո տունը շինուի... Արուսիկն ե՛ս... անծանօթը յետ յետ քաշեց սաստիկ ծիծաղելով, ապա կրկին մօտ եկաւ,

բռնեց նրա ուսը և նայում էր աչքերին,
տօ՛ Արութ... Ճանաչում ես ինձ...

— Ախր մութ է որտեղից ճանաչեմ... և
Արութը նայում էր զարմացած, դէմքը մո-
տեցնում էր նրան, նայում, նայում. ինչ
ասեմ, շարունակեց Արութը, ձայնդ ոնց որ
ճանաչում եմ...

— Բողիկենց թորոսը...

— Վահ, քո տունը շինուի, թորոս, ո՞վ կը-
սպասէր... Երկնքից իջար դու ինձ համար. նը-
րանք ձեռք մեկնեցին իրար, համագիւղա-
ցիներ էին, հեռու ազգականներ, մանկու-
թեան լաւ ընկերներ:

— Տօ. դու այստեղ... Արութ, Արութ,
չը մեռնես դու, թորոսը կրկին խփեց նրա
ուսին, ու ծիծաղեց. լիքը, անհոգ ծիծաղով.

— Եկայ, էլի, եկայ... էլ ապրել չէր
լինում մեր քամբախում... խօ գիտես...
եկայ, բայց երանի թէ ոտքս կոտրուէր, չը
դայի...

— Հը՞, հալդ հալ չի երևում...

— Էլ մի ասա, մի երկու օր էլ այս վի-
ճակում մնամ, ծովը կ'ընկնեմ...

— Ծովը քո դուշմանն ընկնի... բանիդ
կաց, ես այստեղ եմ... փող, բան կայ ջէբդ.

— Մի քանի կոպէկ դեռ մնում է... մի
ամիս անգործ թափառում եմ, կէս կուշտ,

կէս քաղցած... Էհ, քաղաքն էլ մի բան չի,
թորոս, կռապաշտ են, ամենքը կռապաշտ են ..

— Հայ կոճ... Թորոսը կրկին բարձրա-
ձայն ծիծաղեց... դու քաղցած էլ կը լինես.
նա ձեռքով խփեց Արութի փորին, պա՛, քո
տունը շինուի, փորդ քաղցած աղուէսի պէս
մէջքիդ է կպել:

— Ասացի չէ՞, որ ամեն օր կուշտ ու-
տէի, հիմայ երկու շաբաթ առաջ էի ծովը
ընկել, ջերումս մնացել է երկու ըուբլի յի-
սուն կոպէկ. իմ վերջին յոյս ու ապաւէնը.

— Տեսնեմ.

Արութը ձեռքը ծոցը տարաւ, դուրս
հանեց այստեղից մի փոքրիկ քսակ և մեկ-
նեց թորոսին, որ լոռութեամբ առաւ, առանց
բանալու ձեռքում խաղացնում էր.

— Ա՛յս է բոլորը... Ը՛հ, ես աղքատու-
թեան տիրու... և բոլոր թափով քսակը
շարտեց ծովը և սկսեց սաստիկ ծիծաղել,
մինչդեռ Արութը շուարած նայում էր լոռ-
ութեամբ ու մտածում, խելագար չէ՞ արդեօք
իւր ընկերը.

— Տօ, դու գիժ ես...

Թորոսը փորը բռնած քրքշում էր. ապա
յանկարծ լռեց, ու ձեռքը դնելով նրա ու-
սին լըջութեամբ ասաց.

— Հիմայ, ախպէր տղա, դու իմն ես...

քո գործն էլ, քո ապրուստն էլ էս վզիս... հը, մի թափ առ, շարժուիր... Բողիկենց թորոսն եմ ես, անհոգ կաց, տղամարդ եղիր... էլ որ օրուայ համար ենք ընկեր, ազգական...

Մի սուր սուլոց լսուեց ծովի խորքից. թորոսը պատասխանեց նման սուլոցով և ականջները սրեց. քիչ յետոյ խաւարի մէջ, ջրերի վրայ լսուեց թիակների շրփոցը. մինաւակ էր թափառում ծովի վրայ անլոյս ու խորհրդաւոր. թորոսը շտապ շտապ դիմեց դէպի այն կողմը, ուր նաւակն էր. թիակների ձայնը լսեց. նաւակը մօտեցաւ ամփին. երեւցին մի քանի ստուերներ աղօտ ու անորոշ. թորոսը քառորդ ժամի չափ նրանց հետ խօսում էր. նրա ձայնը լսւում էր մերթ որպէս դաւադիր փսփսուկ, և մերթ որպէս ցասկոտ մի հրաման: Արութը ոչինչ չէր հասկանում, նայում էր զարմացած: Այս բոլորը նրան թւում էր մի տարօրինակ հեքիաթ:

Թորոսը յետ եկաւ.

— Այ, թէ կը յաջողուի... հուճեւ ես ձեր... նա բոռնցքը ցցեց խաւարի մէջ սպառնալով աներևոյթ մէկին... գնանք, դու քաղցած ես...

Եւ նրանք լուծուեցին խաւարի մէջ...



IV.

Նրանք միասին իջան մի ճաշարան: Թորոսը պատուիրեց մի ճոխ ընթրիք և լաւ գինի:

— Խմիր ախպէր տղա, քո կենացը, քո գալստեան կենացը. և երկու ընկերները բաժակները շրխկացրին ու դատարկեցին: Արութը երջանիկ էր: Այս ընկերոջ անաւակալ հովանու տակ ինքն իրան փրկուած էր համարում: Ուտում էր ու խմում հաճոյքով: Եւ յետոյ յուշեր ունէին, հին, լաւ յուշեր, մանկութեան ու պատանեկութեան օրերից. Արութի լեզուն բացուել էր, նա խօսում էր, խօսում էր անվերջ... 12

— Տօ, միտդ է, ազնաւների ճուտեր էիր ցած բերում, թորոս, ու բարձրացար բարդու ամենաբարձր տեղը: Ճուտը հանեցիր բնից ու յանկարծ ընկար անազին բարձրութիւնից, մէկ թեւ կոտորուեց, միւս ձեռքով պինդ սղմել էիր ճուտը ու խեղդել ձեռ-

քիդ մէջ, իսկ մենք երեխաներով նայում էինք ծառի կատարին ու ծիծաղում, այնտեղ քաշ էր ընկել պատուուած վարտիկիդ կէսը... Այ, Թորոս, Թորոս...

—Հի...հի...հի... Թորոսը ծիծաղում էր. բո կենացը ախպէր տղա:

—Մի անգամ էլ յիշում ես, պառաւ Հուրիխանը դաշտից էր գալիս ու նստեց ձեր բաղի պատի տակ հանգստանալու, դու կամացուկ մօտեցար, ճիպոտով խառնեցիր պատի ճեղքի մեղունների բունը. նրանք գուրս թափուեցին ու խեղճ պառաւին ուղղակի քրքրեցին. նա թաւալ էր տալիս, ճշում, լալիս, օգնութիւն կանչում, իսկ մեղունները կծոտում էին աւելի և աւելի և մենք փախանք:

—Հի...հի...հի...

—Յետոյ երբ Հուրիխանը գանգատուեց հօրդ, դու ջիգրու նրանց իշի պոչը կտրեցիր, օյին էիր էէ.

—Հի, հի, հի... Տօ ինչ լաւ յիշում ես... օրեր էին հաւ.

—Ամա չար էիր հաւ... միտդ է, մի անգամ էլ աշուղ Ադամին, որ երկու աչքով կոյր էր, ձգել էիր յետևդ և տանում էիր գեղամիջից. խեղճ կոյրին հաւատացրել էիր թէ գիշերն անձրև է եկել, գետինը ցել

է, ջրեր կան. «այստեղ ջուր է, Թուր, ուստա Ադամ», ասում էիր, առաջ անցնելով և խեղճ հալիւոր կոյրը թափ էր առնում, թռչում չոր գետնի վրայ, ու դու հռհռալէն ծիծաղում էիր... Ախ Թորոս, Թորոս...

—Հի, հի, հի... խմիր ախպէր մեր մէջ մնայ, գիւղն էլ մի բան չի... հնու գիւղը հիմնողին ես ինչ ասեմ... գիտես, անասունների պէս չարչարում են շուն ու գէլի համար, ու յետոյ քաղցած, քաղցած, հ՛ը ես աշխարհի հիմքն անիծեմ, Թորոսը բռնեցքով ուժգին հարուածեց սեղանին և աչքերը փայլատակեցին. Արութը դարմացած նայում էր ընկերոջ այս յանկարծական փոփոխութեանը. Թորոսը շարունակեց.

—Աշխարհը սրանք են լափում էէ, այս քաղաքացիք... Աստուած, Քրիստոս, սուրբեր, ժամ, պատարագ ծալել են մի կողմ դրել, ձեռները վեր են քաշել ու շորթում են, տղամարդի տեղ է... ում թուրը կտուր է, աշխարհը նրանն է, վայն եկել է խեղճին տաբել... Չորս կողմում ալան-թալան է. ով սում կարող է կռփում է, փետրում է հաւի պէս... ով ում կարող է, տրորում է, ոտները տակ չընկնելու համար, ուրիշի վրայ

բարձրացիր, ու ոտքով հուպ տուր, թող
թաղուի, յետոյ փող շատ կայ էէ... ծով,
ծով և... Աստուած չկայ...

— Թորոս, Թորոս... Արութը ցնցուեց,
ինչպէս թէ Աստուած չը կայ...

— Վախեցար... հի, հի, հի... կայ, կայ,
այս էլ խմենք Աստծու կենացը և նա բա-
ժակը ուժգին զարկեց ընկերոջ բաժակին, որ
փշուր փշուր եղաւ նրա ձեռքի մէջ և ապակու-
կաւորները ցրիւ եկան յատակի վրայ. եր-
կտով էլ լռեցին. Թորոսը նայում էր բաժա-
կի կաւորներին մտախոհ. ի՞նչ էր մտածում
նա, Արութը չը գիտէր, բայց աշակերտի
պէս նայում էր նրա դէմքին, նրա կարճ,
հաստ բեխերին, որոնց մէջ այնքան վճռա-
կանութիւն ու եռանդ կար, նրա լայն բե-
րանին ու հաստ շրթունքներին, որոնց ծի-
ծաղն այնքան զիւական էր և մանաւանդ
նրա աչքերին, ուր փայլում էր մի խենթ,
անհանգիստ կրակ:

— Գնանք, ասաց յանկարծ Թորոսը
զլուխը բարձրացնելով, բայց չը մոռանաս,
որ ես այստեղ Թորոս չեմ, այլ Բուլատ,
լսեցի՞ր, չը մոռանաս երբէք, և այսուհետեւ
էլ ինձ Թորոս չը կանչես, հասկացար...

— Շատ լաւ, պատասխանեց Արութը
հնազանդ երեխայի պէս. Թորոսը վճարեց

ընթերիքի փողը. «որչափ փող ունի անի-
րաւը», մտածեց Արութը, նայելով նրա թրդ-
թաղրամներով լի քսակին:

Նրանք դուրս եկան:



V

Պայծառ, աստղազարդ զիշեր էր. փողոցներում կեանքը տակաւին եռում էր: Կառքերը սլանում էին դէպի զբօսավայրերը տանելով երջանիկ զոյգեր: Կենսասէր ու պծնուած մի բազմութիւն բռնել էր մայթերը, եռում էր, քրքշում, մոմռում: Զարեարուն ու դեռատի կանանց զգեստների խշխշոցը, հոտաւէտ իւղերի բուրմունքը շրջմեցրել էր հեշտասէր ու արկածախնդիր տղամարդկանց, որոնք մոլորակների պէս պտոյտներ էին գործում այս կամ այն գեղեցկուհու յետևից աշխատելով յափշտակել մի խոստմնալից հայեացք, տարփալից մի ժպիտ, կամ կանացի դալար ու զրաւիչ մարմնի հեշտագրգիռ մի շարժում: Փակ բնակարանների ու առանձնասենեակների կիսախաւարի մէջ շարունակում ու կոկոսած պերճութիւնն ու փայլը դուրս էր թափուել փողոց և կրքի ու զգայական բուռն հաճոյքի

տարփանքով արբեցրել բոլոր առնացի զուլանները, գերել բոլոր հայեացքները: Զուլատաւոր ու հիւանդ կեանքը լողում էր հեշտանքի ախտաւոր ծփանքներում և նրա բոց գրկի մէջ, որպէս հսկայական հնոցում լուծւում, շոգիւանում էր հարիւր հազարների բրախքը:

Արութը բերանաբաց ու ապշած՝ նայում էր լուսթեամբ. Բուլատը ցնցեց նրա ուսը:

— Հը, տեսնում ես, այսպէս են ապրում մարդիկ աշխարհում. քեզ պէս չեն գնում քաղցած փորով ծովի ալիքներին նայելու:

— Աստուած է տուել, բախտի բան է, պատասխանեց Արութը խորը ախ քաշելով:

Բուլատը բարձրաձայն ծիծաղեց դիւական քրքիշով:

— Աստուած է տուել... բաղդի բան է... հի, հի, հի. ճշմարիտ դու օյին մարդ ես, Արութ... և նա խփեց ապշած ընկերոջ ուսին, ճշմարիտ դու օյին մարդ ես...

Արութը զարմացած նայում էր ու չէր կարողանում հասկանալ, թէ ի՞նչի վրայ է ծիծաղում ընկերը, քանի որ ինքը արդար, խելօք բան է ասել:

— Գիտես ինչ— Բուլատը շրթունքները

մօտեցրեց ընկերոջ աղանջին, Աստուած չի տուել, այլ ճանկել են, որտեղից կարողացել են... այ, մի գիրք կայ, նրա մէջ շատ այդպիսի բաներ կայ գրուած:

— Ձէն աշխատել...

— Ոչ.

Արութը գլուխը քաշ ձգեց, մտածում էր, ու հասկանալ չէր կարողանում, թէ այս լաւ հագնուած, կրթուած, այս աղա մարդիկ ինչպէս կարող են վատ ճանապարհներով այսքան հարստութիւն դիզել:

— Լաւ, խօս չեն գողացել, տնաշէն, ասաց նա համարեա յուսահատ զայրոյթով:

— Ձէ, չեն գողացել, վերցրել են, օրը ցերեկով վերցրել են, ինձանից, քեզնից, ումից որ կարող են.

— Սուտ է, ինձանից ոչինչ չեն վերցրել, ես ուր, նրանք ուր... զայրոյթով բացականչեց Արութը:

Բուլատը դարձեալ ծիծաղեց իր հնչուն, դիւական ծիծաղով, որ այնպէս դուր չէր գալիս Արութին:

— Կոօ, յետոյ կը խելօքանաս.

Արութը քիչ էր մնում լաց լինի վիրաւորանքից:

Մի շքեղ կառք անցաւ և նրա մէջ մի պճնուած զոյգ—մարդ ու կին: Կնոջ աղանջ-

ներից քաշ ընկած ոսկէ օղերի խոշոր, թանկագին ակները շլացուցիչ ցոլքեր էին արձակում լապտերների խուսափուկ լոյսի տակ:

— Տեսնում ես, ասաց Բուլատը. այս կնոջ աղանջներից հագարներ կայ քաշ ընկած. կողքի մարդն է ընծայել, հարիւր հագարներ, միլիօններ ունի, և իր կինը չի, այլ սիրուհին. հասկացա՞ր, կոօ.

— Իր փողն է տուել.

— Դառն քրտինքով աշխատած փողը այդպէս հեշտ կերպով սիրուհուն չեն տայ.

— Հօր աշխատածն է, պապից է մնացել, ես ի՞նչ գիտեմ, Աստուած որ մարդու տուեց, կը տայ, բաղդի բան է, բաղդի տէրը մեռնի.

— Ապա դու ի՞նչու չես աշխատում ու շաբաթներով քաղցած զկրտում ես փողոցներում:

— Այդ էլ իմ բաղդիցն է, ախպէր... ամեն մարդու ապրուստը վերից է սահմանւած, այ, այնտեղից. Արութը ցոյց տուեց երկինքը:

Բուլատը վերստին քրքշաց.

Արութը կծկուեց, խեղճացաւ. այդ քրքրի իւրաքանչիւր հնչիւնը թափանցում էր մինչև նրա հոգին, ցուրտ էր սփռում նրա կրծքի տակ, ասեղներով ծակոտում էր նրա

միւր: Ինչ ուզում էր թող ասէր Բուլատը, բայց այդպէս չը ծիծաղէր:

— Լաւ տեսնիր այն մարդուն, ասաց յանկարծ Բուլատը ձայնը փոխած:

— Ո՞ր մարդուն:

— Այն որ անցաւ այն կնոջ հետ:

— Ի՞նչ կայ որ...

— Ոչինչ... Բուլատը լռեց, մնաց մտած-
կոտ, ապա կամացուկ սուլեց մի անհաս-
կանալի եղանակ, որ ոչ երգ էր, ոչ պար:

Քայլում էին լռութեամբ. Արուսթը լաւ
չէր յիշում այն մարդու դէմքը, նրան գրաւել
էր կնոջ պերճութիւնը և նրա ականջների ակ-
ները, բայց միտն էր, որ այն մարդը սրա-
ծայր և դէպի այտերը ցցուած բեխեր ունէր:

— Բեխերը սուր էին, ասաց նա բաւա-
կան ուշ:

— Ի՞նչը.

— Բեխերը.

— Ո՞ւմ բեխերը:

— Այն մարդու.

Բուլատը երևի մոռացել էր այդ, ուրիշ
մտքեր էին պաշարել գլուխը, և ծիծաղեց
մեղմօրէն:

— Հը, լաւ աչքեր ես ունեցել, ախ-
պէր տղա, և վերստին սուլեց նոյն եղա-
նակը:

Վերստին լռեցին և քայլում էին կողք-
կողքի: Արուսթը մտածում էր. նա այլևս փո-
ղոցի անց ու դարձին, պերճութեանը, խա-
նութների լուսաւոր ցուցափեղկերին չէր
նայում. նոր, դաժանօրէն անհասկանալի
մտքեր թափով դառնում էին նրա գլխում,
ճմուռում էին ուղեղը և նա անկարող էր այդ
բոլորից մի հասկանալի ամբողջութիւն կազ-
մել, մի ելքի յանգել: Մշուշ էր գլխում, և
այդ մշուշի մէջ հնչում էր Բուլատի վատ
քրքիջը դժոխային շեշտերով և փայլում էին
նրա գիւական աչքերը: Նա իրան լաւ չէր
զգում:

— Գնանք այստեղից, հեռանանք:

Բուլատը հասկացաւ. նրանք առաջ ան-
ցան, թերուեցին այլ փողոց: Նրանց առաջ
հասարակաց ժողովարանի հսկայ շինութիւնն
էր, լուսաւոր, պերճ ու հպարտ: Բազմաթիւ
կառքեր էին սպասում փողոցում:

— Գիտե՞ս, այստեղ փողի դէզեր կան. այս-
տեղ ունեւորները թուղթ են խաղում և իրա-
րից շատ փող են տանում... հազարներ...

— Հազարներ...

— Հա, հազարներ, հարիւր հազարներ.
գիտես որքան է հարիւր հազարը, միլիոնը...

Ո՛չ, Արուսթը չը գիտէր. նա գլուխը տա-
րուբերեց լռութեամբ և կրկին ընկղմուեց

խոր մտածմունքի մէջ. նա այժմ ճգնում էր ըմբռնել, թէ որքան է հարիւր հազարը, միլիոնը և միտքը չէր զօրում. թողեց այդ, կրկին միտքը դարձաւ Բուլատին:

Ընկերը քանի գնում էր, նրան դուր չէր գալիս. նրա ասածները իր համար մի մռայլ անդունդ էր, ուր նայել չէր կարողանում առանց գլխի պտոյտի: Այդ անդունդը՝ ահաւոր ու խաւար, լի էր իր համար անհասկանալի հազար ու մի պատկերներով, որոնք ինչպէս մըրկի շնչով դառնում էին ու քաշքշում իրար: Եւ բոլորի վրայ դարձեալ հնչում էր Բուլատի վաստ թրթիջը: Նա վախենում էր իր ընկերից, վախենում էր նրա սուր, խայթող աչքերից, նրա դիւական, չար թրթիջից և՛ սոսկում էր և՛ զգում էր միաժամանակ, որ նրանից ազատուել չի կարող: Նա կանգնած էր մի առասպելական վիշապի բոց երախի առաջ, զգում էր նրա այրող, մահաբեր շունչը, դողում էր, կ'ուզէր փախչել, ազատուել, բայց բաց աչքով տեսնում էր, որ դէպի մահն է գնում: Նրա փողի քսակը ծովը նետելով, ընկերը ասեւ կախարդել էր նրան:

— Կսիր, ասաց նա երկար լռութիւնից յետոյ, անհամարձակ, խեղդուած ու դողդոջ ձայնով — Լսիր, ախպէր, տուն տեղ, ընտա-

նիք, թողել եմ եկել մի կտոր արդար հաց վաստակելու. աշխարհ տեսած, խելօք, աչքաբաց մարդ ես, հազար ճամբայ գիտես, ի սէր Աստուծոյ, թէ ուզում ես լաւութիւն անել, վաղն և եթ մի գործ ճարիր, բանւորութիւն, մշակութիւն, ինչ ուզում է լինի... ու մինչև մահս կ'օրհնեմ քեզ, աղաչում եմ, ախպէր, քաշածս ինձ բաւական է. ոչխարն իր ոտից կը կախեն, այծը իր ոտից... քո բանն ուրիշ է, իմն ուրիշ:

— Ի՞նչ եմ ասում որ, իմ ցանկութիւնն էլ այդ է, գնանք ինձ հետ այս գիշեր, կը խօսենք, հանգստացիր, լսիր իմ խորհրդին, և գործը պակաս չի լինի. ինչ որ ես եմ անում, նոյնը դու կ'անես. խօ հաւատում ես ինձ, ախպէր տղա:

— Հաւատում եմ, պատասխանեց Արութը, բայց խեղտուած ձայնը վկայում էր, որ չի հաւատում, այլ և վախենում է. ասաց, լռեց, կծկուեց, փոքրացաւ և կրկին նոյն անդունդը բացուեց աչքերի առաջ:

Բուլատը լաւ հասկացաւ նրա հոգեկան ընկճուած վիճակը և վայրկենապէս տոնը փոխելով ուրախ կատակի՝ դարձաւ նրան խփելով ուսին:

— Հը... քանի մահնէ՞ս ես ուզում, հմրիւր, հազմր, տասն հազմր... բաւական է...

նա կանգնած էր փողոցի մէջտեղում, ձեռները խաչած կրծքին, մի ոտքը առաջ՝ միւսը յետ, գլուխը յետ ձգած գոռոզ, համարձակ դիրքով և նայում էր ընկերոջը: Լապտերի լոյսի տակ նրա վառ, անիրաւ աչքերից, հաստ ու խիստ բեխերից, իրար վրայ սղմուած շրթունքներից, նրա ամբողջ այդ դիւակաւ պատկերից մի դաժան, անողորմ բան, աներևոյթ ու գալարուն, ինչպէս օձը խաւարի մէջ, սողում գալիս էր, փաթաթւում Արուսթին, ցուրտ օղակներով պատում էր նրա հոգին և ճնշում, ճնշում:

Արուսթը նայեց, գլուխը քաշ ձգեց ու լռեց:

— Տղամարդ եղիր ասում եմ ու հաւատաւ ինձ, անփորձ ես դեռ, չորս կողմդ նայիր, ու մի քիչ խորը միտք արա...

Արուսթը հնազանդ երեխայի պէս գնում էր այդ սարսափելի մարդու յետևից, որ նրան քաշում էր աներևոյթ օձի գալարներով, քաշում էր ու տանում դէպի խաւար զարհուրելի անդունդը...



Երած, խաւար բաւում, այն սենեակը, ուր ներսմտաւ Արուսթը ընկերոջ յետևից, թաց, լալրծուն մթնոլորտ ու այնպիսի հոտ ունէր, որ Արուսթը անուանել չէր կարողանում. կծուի ու բորբոսի ծանր հոտն իրար խառնուած, կսկծեցնում էր նրա քիթը և Արուսթը փնջացնում էր փրըշտացող կատուի պէս: Այնուամենայնիւ սենեակը նրան թուաց խիստ շքեղ զարդարուած: Պատերի տակ ներկած սեղաններ, աթոռներ, փափուկ թախտեր, լուսամուտների վրայ ծաղկաւոր վարագոյրներ, և որ ամենից աւելի գրաւիչ էր Արուսթի համար, մի խոշոր հայելի, ուր նա կարողացաւ ինքն իրան տեսնել ամբողջ հասակով: Իր կեանքում առաջին անգամն էր այսպիսի հազուադիւր բաղտի արժանանում, ուստի ընկերոջից ծածուկ, ամաչելով, երկրորդ անգամ անցաւ հայելու առաջից, նայեց իր պատկերը, իր գունատ դէմքը, հանգած աչքերը,

քաշ ընկած ուսերը, ապա անցաւ նստեց
թախտի վրայ: Նայում էր իր շուրջը զար-
մացած. աղտոտ, կասկածելի սենեակը նրան
թւում էր պալատ:

— Այստեղ դ՞ուք ես ապրում:

— Այստեղ ով ասես կ'ապրի, հարկա-
ւոր է միայն փող ունենալ:

Արութը ոչինչ չը հասկացաւ: Հարցը
չը կրկնեց. օրուայ տպաւորութիւններից
գլուխը ծանրացած, նա թեք ընկաւ թախ-
տի վրայ. բայց քնել չէր ուզում. նա սպա-
սում էր, և չը գիտէր ինչու անհանգիստ էր:

Աւելի անհանգիստ էր Բուլատը. նա
չէր նստում, ծխում էր ու անդադար յետ
ու առաջ քայլում, երբեմն նայում էր դռնից
դուրս, մերթ կանգ էր առնում ականջ դը-
նում, մերթ մօտենում էր յետ քաշում լու-
սամուտի վարագոյրը, նայում բակը, ապա վե-
րստին քայլում էր մտախոհ ու ծխում, ծխում:

Արութը հետևում էր նրա բոլոր շար-
ժումներին, նայում էր նրա կարճ հասակին,
թաւ, ցասկոտ բեխերին, խոր ընկած, կրա-
կոտ աչքերին, նայում էր, մտածում ու վա-
խենում էր անորոշ բանից: Նրան թւում
էր, թէ այն՝ ինչ սպասում է ընկերը, այն
անորոշ, մութ բանը մի անագին վտանգ է,
որ գալիս է խաւարի միջից, գաղտագողի,

սողալով, որ նա այժմ բակումն է, պատի
տակ անշուշտ գալարւում է և ուր որ է կը
ցատկի ներսիւ կոկորդը կը բռնի: Ապա այս
բոլոր սև մտքերը համարում էր արդիւնք
իր վախկոտ անփորձութեան, և Բուլատը նրան
թւում էր մի բարեսիրտ, բարեսեւ մարդ,
որ կարեկցութիւնից յանձն է առել իր
բաղտը տնօրինել, և ծածուկ ամաչում էր
իր վատ մտքերի համար:

Արմունկը, որի վրայ յենուած էր, ցա-
ւեց. նա կամացուկ գլուխը ցած ձգեց մի
բարձի վրայ. ապա յիշեց մօրը, Ծովիկին,
երեխաներին... ճախարակը ճռռում է, մայրը
երգում է անուշ ու լալկան... նաւը սլա-
նում է ծովի վրայ... անագին նաւ, որ կա-
տաղի աչքեր ունի, սև երախ ու մռնչում
է... ծովը փոթորկոտ, ծովը փրփրուն... նաւը
ճռռում է, տնքում... ալիքները բարձրանում
են... բարձրացան... նայում են ցասկոտ
աչքերով, սրում են ճիրանները. բոլորը գա-
զաններ են... Ժանիքներ ունեն... փնտրում
են յատկապէս Արութին... նրանցից մէկը
առաջացաւ, սուր և վեր ցցուած բեխեր
ունի... ծիծաղում է դիւակաւ քրքիջով, և
աչքերը... շարտեց Արութին ծովը...

...Պրան շրխոցից Արութը աչքերը բա-
ցեց: Իրար յետեից, հեիհե, ճշալով հայհո-

յելով, երգելով ներս ընկան երեք երիտա-
սարդ: Արութը նայում էր և հասկանալ չէր
կարողանում, թէ ուր է ինքը, ի՞նչ է կատար-
ւում իր շուրջը...

— Ուրա՛, կանչում էր իւրաքանչիւր
ներս մտնող ձեռքին ճօճելով փողփողուն
թղթադրամների ծալքեր և իւրաքանչիւրը
իր ձեռքի փողով հարուածում էր Բուլատի
գլխին, երեսին, քթին, վզին... Բուլատը ժրպ-
տում էր երջանկութեամբ:

— Կեցցէ՛ք աղէք... Բուլատը հովանաւո-
րողի քաղցրութեամբ խփում էր սրանրաթի-
կունքին, ուսին և ժպտում...

Արութը կամաց կամաց ուշքի էր գա-
լիս. նա յիշեց ծովի վրայի խորհրդաւոր նա-
ւակը, Բուլատի սուլոցը, նրանց ծածուկ
խօսակցութիւնը... ուրիշ ոչինչ պարզել չէր
կարողանում.

— Ուրա՛... ուրա՛... ուրա՛...

— Գինի եմ ուզում է՛, գինի՛, ճշում
էր միականի երիտասարդը թափ տալով Բու-
լատի թեւը... հայ ես քո... շամպայն մեզ
նման տղամարդին, շամպայն, խօմ տեսնում
ես... և նա վերստին ճօճեց թղթադրամների
ծալքը Բուլատի գլխին:

— Աղջիկ, տասը աղջիկ, ճշում էր չե-
չոտ, իծամօրուք մի երիտասարդ, որին

Չօփուռ էին ասում. էս սհաթիս, Բուլատ,
ես քու մարդ ասողի... դու էդ ինչպէս ես
ընդունում մեզ, կը պատուեմ, ես սրանց
տիրում... և նա պատրաստւում էր պատա-
ռոտել ձեռքի թղթադրամները... Բուլատը
խլեց և իր ծոցը գրեց: Չեչոտը ընկաւ միա-
կանու յետևից, նրա փողը խլելու:

Արութին կարծես չէին նկատում. առա-
ջինը նրա վրայ ուշք դարձրեց երրորդ նո-
րեկը: Նա մեծ, բրդեղոտ գլուխ ունէր,
հաստ պարանոց, լիքը կարմիր երես, հաստ
շրթունքներ և իւղոտ աչքեր. նրան Արջ
էին ասում: Երբ առաջին շփոթը մի փոքր
հանդարտուեց, Արջը քրտինքը սրբեց, շուրջը
նայեց, կամացուկ հրեց Բուլատի թեւը ցոյց
տալով Արութին:

— Սխալ էր աղայ է, եղաւ պատասխանը:

Արջը պատասխանից բոլորովին գոհ,
մօտեցաւ, ձեռք տուեց Արութին, նստեց
նրա կողքին և սկսեց հանդարտ համարել
թղթադրամները:

— Գինի՛... աղջիկ... լսում էր միւս
կողմից:

Արութը կծկեց, փոքրացաւ, աշխա-
տելով չ'երեւալ. յետոյ նրա մտքով անցաւ,
թէ լաւ կը լինի գաղտնի դուրս գալ ու
փախչել. բայց ուր գնալ ուշ պիշերով այս

անիրաւ քաղաքում... սակեց, յետ քաշուեց,
թիկունքը տուեց պատին ու սալասում էր,
թէ ի՞նչ է լինելու...

Բուլատը թրխկացրեց խորքի դուռը,
դուռս եկաւ մի պառաւ, յետ գնաց և իս-
կոյն բերեց մի քանի շիշ գինի, խցանները
թռան տրաքոցով... խմում էին:

— Խմիր, Արութ, խմիր... տղերք, իմ
ազգականն ու ընկերը. ախպէր տղա:

Արութը աւելի կծկուեց. նրան դուրս քա-
շեցին իր տեղից և բոլորի բաժակները դէ-
պի նրան ուղղուեցին...

— Կենանցդ, կենանցդ, կենանցդ...

Արութը մի փոքր բացուեց. նա նախ
անհամարձակ, դժուարութեամբ, ապա ա-
ւելի և աւելի համարձակ խմում էր: Եւ
քանի խմում էր, մութ երկիւղը նրա սըր-
տում թուլանում, մաշուում էր և կենսու-
րախ տրամադրութիւնը համակում էր էու-
թիւնը:

Մի ժամանակ նա նոյն իսկ սկսեց նախ
կամաց կամաց, ապա բարձրաձայն երգել.

«Բազի ու սագի ձագն էլ

«Թող լճերում մենակ չ'ըլնի»...

Չայնը լաւ էր. երգել գիտէր. զգաց-
մունք կար:

— Ի՞նչպէ՛ս, ինչպէ՛ս...

Արութը կրկնեց լիքը կրծքով, լալն ու
համարձակ.

— Ախպէր տղա, անուշ ձայն ունիս. եր-
գիր, երգիր...

Եւ Արութը երգեց յոյգով, վշտով, ամ-
բողջ իր ցաւած հոգու եռանդով: Երգի հըն-
չիւնների հետ ասես սիրան էր կտոր-կտոր
դուրս թափւում: Ծովիկի կարօտն էր վա-
ռում հոգին: Այժմ նա երգում էր «կարա-
ւան կոտորող» աստղը, որ ծագում է «Լուս-
աստղից» առաջ և խաբում է ճամբորդներին.

«Բոցոտ աստղ. պայծառ աստղ գիշեր-
լալ,

«Կարաւան մատնող, քեաֆուր աստղ,
յետ դարձիր.

Դարձիր, դարձիր, դարձիր...»

«Բոցոտ աստղ, կարմիր աստղ մի ծագիր,
«Տես իմ եարից չեմ կշտացել, յետ
դարձիր.

դարձիր. դարձիր, դարձիր...»

— Ապրիս, ապրիս...

Բուլատի աչքերում անգամ արցունք-
ներ երևացին. հայրենի հողն էր հեծեծում
խաւարի, մշուշի, ցաւի միջից. նրա հոգու
մի կորած անկիւնում զարթնեց մի մոռաց-
ւած, լքուած, մոխրապատ զգացմունք, դէպի

այն բոլորը, ինչ նա անդարձ կերպով թա-
ղել էր մեծ քաղաքի գարշանքի մէջ:

Գինին հոսում էր և երգը լալիս...

— Ահ, անիրաւ աստղ, դու ինձ էլ խա-
բեցիր և կարաւանս թշնամուն տուիր... Չար-
դուած եմ, ջարդուած եմ... ասաց Արութը
ու լռեց, աչքերը սրբելով:

— Խմենք ախպէր. Բուլատը զարկեց իր
բաժակը Արութի բաժակին և առաջին ան-
գամ նրանք խմեցին նոյն յոյզով:

Բուլատի յոյզը սակայն վայրկենական
էր որպէս հայրենի գով զեփիւռ, որ փչեց
ու անցաւ. իշխողը գինին էր և խենթ, կա-
տաղի խրախճանքը: Չեչոտն ու միականին
ցատկեցին և սկսեցին պարել ոտքի տալով
սեղաններն ու աթոռները. Արջը լուռ խմում
էր ու մոմոում. Արութը չուած աչքերով
նայում էր, ապա յանկարծ մի թափով դա-
տարկեց առաջի լիքը բաժակը, յետոյ թռաւ
համբուրուեց Բուլատի հետ, անցաւ փաթա-
թուեց Արջի բրդոտ պարանոցով:

Դուռը մէկ էլ բացուեց... և ինչպէս
մորրիկ ներս ընկաւ մի դեռատի կին, յետոյ
երկրորդը, երրորդը, չորրորդը, բոլորն էլ
շիկահեր, կապուտաչեայ, հոլանի կոններով
ու կրծքով. բարակ թափանցիկ շղարշի տակ
նրանց վարդագոյն, մատաղ մարմինները

թրթռում էին, գալարւում պազշոտ ցնցում-
ներով, և ներկած յօնքերի տակից աչքերը
վաւաշոտ փայլ արձակում. ներս ընկան ինչ-
պէս շղթայազերծ, կատաղի կիրք, և մի վայր-
կեան յետոյ նրանցից իւրաքանչիւրը կա-
խուած էր մի տղամարդի պարանոցով, կամ
նստած էր ծնկանը: Միականին խլեց նրանցից
մէկին ինչպէս ախտաբորբոք սատիր, նրս-
տեցրեց իր պարանոցի վրայ, և միւսին Չե-
չոտը դրեց իր թիկունքին, և սկսուեց կրքի
կատաղութեան պարը: Նրանք ցատկոտում
էին, ճշում, վազվզում, մինչդեռ Արջը իր
ծնկան վրայ նստացրած կնոջը, բաժակի ձե-
տուած մի հարիւրանոց թղթադրամով գինի
էր խմացնում, կամ թափում գլխին:

Արութը թէև հարբած՝ տեսարանի ա-
նօրինակութիւնից ցնցուած, վերստին կրծ-
կուեց ու գունատուեց. բայց դա միայն մի
վայրկեան. և երբ աղջիկներից ամենից գերը,
բոց աչքերով, մաղերը փողփողուն իր գիրգ
մարմնով փլաւ նրա ուսին ու նստեց ծըն-
կանը և փաթաթուեց պարանոցով, Արութը
ցաւի մի սուր ճիչ արձակեց, ապա խոկոյն
սկսեց երկայն ու ներվային ծիծաղել:

— Գինիի...

Ո՞վ էր կանչում գինի. Արութը նոյն
բաժակից փոխ առ փոխ խմեց կնոջ հետ,

ապա շալակեց նրան և երերալով, տնքալով խառնուեց միւսներին, պարում էր պագշտութեան անդուսպ, անասնական պարը: Յետոյ նա աղօտ կերպով տեսաւ, թէ ինչպէս Զօփուռը ծոցից հանեց թղթադրամների ծալը, նրանով խփում էր կնոջ մերկ ստիներներին, ապա ինչպէս շաղ տուեց նրա գլխին... թղթադրամները թիթեռների պէս խաղացին օդում և ցրիւ եկան սենեակի չորս կողմը: Տեսաւ, ինչպէս Արջը պատռտեց գինով թացացած հարիւրանոցը և կտոր կտոր փորձում էր կոխել կնոջ բերանը, որը ճշում էր, քրքշում էր, պաշտպանւում... յետոյ Արուիթը թուլացած ընկաւ իր կենդանի և ծանր բեռի տակ... յետոյ համբոյրներ, կատաղի շնական համբոյր, պատառոդ, արիւնոտող ժանիքներով... ճիչ... ծւռոց... Լամպը մարեց, թէ մարեցին...

Պաւար էր...

Եւ խաւարի մէջ շարունակւում էր գարշելի օրգիան...

Աթոռների արանքում, թախտերի վրայ, սեղանների տակ հարբած ու անպատկառ թաւալւում էին, մոմռում, տնքում, ճիչ... լաց... հեծեծանք... ծիծաղ միաժամանակ:

Արուիթն ընկած էր սեղանի առաջ երեսնիվար, նրան տրորում էին, քաշքշում,

նա անմտօրէն տարածում էր ձեռները խաւարի մէջ, չանգռում էր գետինը, կամ բռնում էր մի ձեռք, մի ոտք, մի գլուխ, մագերի մի փունջ, որ նա քաշում էր առանց հաշիւ տալու ինքն իրան: Յետոյ նրա աչքին բացուեց ծանօթ անդունդը, և նրա խորքում իրար գալարուած, կրքոտ, մերկ մարմիններ, ինչպէս օձեր, որոնք խածոտում էին իրար, քաշքշում տրորում... արիւնը ժայթքում էր... գազաններ էին, որոնք լիզում էին իրենց դունչերը... վերստին կատաղօրէն պտոյտներ գործում, մռնչում, քրքրում, լալիս... և յետոյ... Ծովիկը... ճախարակը... մայրը... նաւը... և դարձեալ մերկ կանայք, կատաղի աչքերով... մաղերը հողմածածան...

Նա զառանցում էր

.



VII.

Ինչպէս տունը կորցրած, ծեծուած շուն, Արութը վերստին մենմենակ քայլում էր փողոցներով: Առաւօտեան նա դուրս էր փախել գիշերային օրջից, հէնց որ ուշքի էր եկել, թողնելով միւսներին քնած: Խոր ընկած աչքերի տակ կապոյտ՝ և հայեացքը խելայեղօրէն անորոշ՝ նա քայլում էր բազմամբոխ փողոցներում, ինչպէս անապատում, մենակ ու մոլար:

Եւ մտածում էր ցաւագին ճիգով. նա երբէք այսպէս խորը չէր մտածել. գանգը տնքում էր մտքերից և ճակատն այրւում:

Մշուշը պատել էր նրա ուղեղը, չը նայելով իր բոլոր ջանքերին վերապրել այդ անիծուած գիշերուայ գարշելի պատկերները և տանջել, խաղաղանել իրեն զարթնած գիտակցութեան մտրակով: Շատ բան չէր յիշում, բայց ինչ որ յիշում էր, այն էլ բաւական էր, որ նրա գեղջուկ, անաղարտ հոգին ամօթից կարմրէր, ինչպէս բարկ թոնիր:

Պատկերները, ինչպէս այլանդակ ճիւղներ, խոլ ձևերով երևում էին շամանդաղի մէջ և արագութեամբ ծածկւում. ու նրանց տեղը մնում էր անարգանքի մի խորին զգացմունք, որ համակել էր նրա ամբողջ էութիւնը ինչպէս մինչև ոսկորները թափանցող ցուրտը: Ու նրան թւում էր, թէ մէկը մահացու անարգանք է հասցրել նրա կնոջը, պղծել է հօր գերեզմանը, նրա բոլոր մեռելներին, թէ նրան ծեծել են, տրորել ցեխերի մէջ ինչպէս աղտոտ փալատ, ու թքել վրան: Կ'ուզէր փախչել այդ անասելի անարգանքից, բայց զգում էր, որ նա սողում, գալիս է իր յետևից ինչպէս աղտոտ հեղեղ:

Խնքն իրան թւում էր անդառնալի կերպով ապականուած, քայլում էր կարծես ճար ու հնար փնտրելով սրբել իր հոգին, ինչպէս օձը, որ մի ձեղք է փնտրում վրայից իր խորխը հանելու համար:

Ո՞ւր էր գնում, չը գիտէր. բայց գիտէր, որ պիտի քայլի, քայլի, մինչև իրան մի բան պատահի, մի չար, ու ճակատագրական բան. թող հրեն ու վար ձգեն, փշրեն, թող մի մոլորուած գնդակ դիպչի, թող կառքի տակ ընկնի ջարդոտուի:

Եւ քայլում էր միակերպ ու մոլար քայլում ծքով...

Վերստին յայտնուեց նոյն փողոցներում,
որոնցով երեկ երեկոյ անցել էր Բուլաւի
հետ, նոյն կառքերը, նոյն պերճութիւնը,
նոյն ակստաւոր ու հեշտասէր բազմութիւնը,
նոյն կանայք և բոլորը մշուշապատ, բոլորը
անորոշ ու անձև: Նա շատ պարզ, շատ ու-
րոշ տեսաւ միայն այն կնոջը, որի ականջ-
ներից կախուած էին հազարանոց ակաները և
դարձեալ շլացուցիչ փայլ էին արձակում, ա-
րևի շողերի տակ:

Կինն այժմ մենակ էր. նա քայլում էր,
ինչպէս ամբոխի թագուհի, շքեղօրէն զու-
գուած ու հպարտ, բարձրահասակ, ճկուն և
տարփօրէն բորբոքիչ: Արուծի աչքովն ըն-
կաւ նրա մարմնի ալեծածան խաղերը, թանձր
զգեստերի չափածոյ ցնցումները նրա ամեն մի
քայլի հետ և մտածեց «այդ նրանից է, որ
շրջագգեստի վերի մասը նեղ է. եթէ լայն
լինի, այդպէս չի երևայ. ինչո՞ւ է այդպէս
նեղ... երևի կինը չը դիտէ, որ յետևից նա
այնպէս ամօթալի է... մէկն ասէր այդ նրան»:

Կնոջ փոյթը չէր, նա երևի չէր բաժա-
նում Արուծի մտահոգութիւնը, քայլում էր
հպարտ ու համարձակ. լայնեզր գլխարկի
վրայ փողփողում էր զոյնզոյն փետուրնե-
րի մի անագին փունջ ինչպէս մի կենդանի
թռչուն. և ձախ ուսից թիկունքի վրայից

մինչև աջ թևի տակ կախուած էր մի սպի-
տակ, փափրիկ բան, որ Արուծին թուաց ամ-
պից շինուած մի օձ, թեթև ու թրթռուն,
որ մեղմօրէն շոյում էր կնոջ ձախ այտը,
բարձր կաբապային պարանոցը: Ի՞նչ էր այն,
ինչի՞ էր հարկաւոր. Արուծը հասկանալ չէր
կարող, բայց ականջների փայլվումն օղերից
ու ականերից աւելի նրան գրաւում էր այդ
օձանման ամպը: Նա քիչ էր մնում մօտենայ
և գաղտագողի ու կամացուկ ձեռք տայ, շօ-
շափի... նա նոյն իսկ քայլեց մօտ, շատ մօտ
այդ կնոջը և յանկարծ ոտքով կոխեց նրա եր-
կար շրջագգեստի պոչը: Կինը յետ նայեց, դե-
ղեցիկ աչքերը խոժոռեց.

— Անաստէն... լսեց Արուծը, չորացաւ
երկիւղից. իսկ կինը փէշը ձախ ձեռքով
բարձրացրեց, քայլերն շտապեցրեց ու կորաւ
ամբոխի մէջ:

Արուծը յոգնած էր. նա կանգնեց, յե-
նուեց հեռախօսի սեանը և նայում էր ոտ-
ների առաջ: Միշտ ուշակորոյս:

— Ի՞նչ ես ցցուել այդտեղ. մարշ...

Ոստիկանն էր... Արուծը թափով պո-
կուեց իր տեղից և շտապով հեռացաւ, վախե-
նալով նոյն իսկ յետ նայել: Դարձեալ քայ-
լեց երկար, դիտելով խանութներն ու վա-
ճառատունները: Յետոյ կանգնեց մի մեծ ցու-

ցափեղկի առաջ, ուր մի բրոնզէ նեզը շար-
ժում էր ձեռքերը, խաղացնում էր աչքերը,
ժպտալով իր հաստ շրթունքներով: Նայում
էր Արութը ու հասկանալ չէր կարողանում,
թէ արդեօք կենդանի է այդ սև մարդը թէ...
չէր իմանում՝ «թէ ի՞նչ...»

Եւ նայում էր երկար:

Երկու թափառաշրջիկներ յայտնուեցին
նրա երկու կողմում ու լիքը կրծքով հռհռում
էին, երբ նեզը խաղացնում էր աչքերը,
ապա նրանցից մէկը յանկարծ Արութին թա-
փով հրեց միւսի վրայ. վերջինս յետ քաշ-
ւեց և Արութը ամբողջ հասակով փռուեց
մայթի վրայ. անցորդները ծիծաղում էին:

Արութը վերկացաւ, լուռթեամբ վեր-
ցրեց ընկած գլխարկը, թափ տուեց փոշին,
դրեց գլխին և ձեռքերը գրպանը կոխած
առաջ շարժուեց: Մի քանի քայլ յետոյ, նա
յանկարծ յետ դարձաւ գունատ ու շփոթուած,
հասաւ նոյն տեղը, ուր ընկել էր, շուրջը
նայեց ուշադրութեամբ, պրպտեց մայթի քա-
րերը, շրթունքները դողողացին, նա երե-
րաց կանգնած տեղը, մի բան մոմուաց, կըր-
կին գրպանները նայեց, և յուսահատ հե-
ռացաւ... Նրա գրպանից անյայտացել էր
կնոջ՝ Ծովիկի մատանին...

Այդ մատանին... մայրը մի հատիկ ոսկի

ուներ, հին օրերից պահած, երբ որդին ա-
մուսնացաւ, նա այդ ոսկին ձուլել տուեց
մատանի և ընծայեց հարսին: Եւ մի ան-
գամ Ծովիկի ձեռքից մատանին թոնիր
ընկաւ ծռմուռեց, կեղտոտուեց: Երկար ժա-
մանակ այնուհետեւ ընկած էր մատանին Ծո-
վիկի փոքրիկ արկղում: Երբ Արութը քա-
ղաք եկաւ, վերցրեց հետը, որ նորոգել տայ
և յետ տանի: Նա պահում էր այդ մատանին
աչքի լոյսի պէս, կապոտած, փաթաթած մի
քանի կտորներով. այնքան յուշեր կային
կապուած նրա հետ... և այդ մատանին տա-
րան երկու գրպանահատները:

Արութի վիշտն ահագին էր. ամեն բան
մոռացաւ, մնաց մատանու ցաւը: Բազմի
վերջին հարուածն էր... և դիմեց դէպի ծովը:

Հասաւ նուիրական դարձած տեղին, և
ամբողջ հասակով երեսնիվար փռուեց աւազի
վրայ. ձեռները դրեց ճակատի տակը, կուրծ-
քը փլաւ և դառն դառն հեկեկաց: Ծովը ե-
րեկոյեան արևի պայծառ շողերի տակ մեղ-
միւ օրօրում էր ամբերի մէջ, ինչպէս յոգ-
նած գեղեցկուհի, և մանրիկ, հազիւ նկա-
տելի կոհակները ամբերի մօտ անուշ շրշիւ-
նով համբուրում էին աւազները, ժպտում,
քչփչում, անհոգ ու անտարբեր դէպի լա-
ցող մարդու ահագին վիշտը:

Արութը շարունակում էր լալ երեխայի պէս. նրա լայն, ուժեղ թիկունքը ցնցում էր ուժգին հեծկտոցից, աւազը խշխշում էր նրա կրծքի և գլխի տակ, և նա կարծես իր հեծեծանքով աղերսում էր մայր երկրին յետ առնել նրան և թաղել իր ծոցում...

Մէկը կամացուկ նստեց նրա կողքին և ձեռքը ուսին դրեց.

— Երեխայ...

Արութը գլուխը բարձրացրեց... Բուլատն էր... որ հետևել էր նրան քայլ առ քայլ ինչպէս ճակատագիր.

— Ինչո՞ւ ես լալիս.

Արութը լուռ էր. Բուլատը շարունակեց.

— Ձէ, եղբայր, ես այժմ տեսնում եմ որ դու այս քաղաքի, օտարութեան մարդ չես. ճանապարհ ընկիր առաջին նաւով:

— Հա, հա, գնամ... գնամ... արցունքի միջից մրմնջաց Արութը... իսէր Աստծոյ, ոտքդ համբուրեմ, ճանապարհ դիր ինձ... ես խեղճ մարդ եմ. կորչում եմ... ծովը կ'ընկնեմ, իմ երեխաները կը մնան որբ...

— Գնա, գնա... թէ չէ դու իմ գլխին պատիժ կը դառնաս:

— Ա՛խ այս քաղաքը... որ կողմը դառնում եմ... կռապաշտներ, անհոգի, անաստուած մարդիկ... հէնց նոր գրպանիցս հա-

սեցին կնոջս մատանին... ո՞ւր կորչեմ, որ ջուրն ընկնեմ...

— Ա՛ռ, ասաց Բուլատը քմծիծաղ և մի փոքրիկ կապոց մեկնեց նրան:

Արութը աչքերին չէր հաւատում. այո՛, իր կապոցն էր, մատանին մէջը... շուարած նայում էր մէկ կապոցին, մէկ Բուլատին:

— Հ՞ը... զարմանում ես... հեռուից տեսայ ինչպէս քեզ վար ձգեցին. կանչեցի մօտս, երկու ապտակ տուի և ձեռքերից առայ, ինձ հետ հանաք անելը հեշտ չէ... նրանք ինձ լաւ գիտեն: Իսկ դու երեխայ ես, կատարեալ երեխայ, գիւղ գնա, ու փթիր աշնտեղ քաղցած:

Արութի աչքում այս սարսափելի մարդը դարձաւ մի հսկայ ամենակարող, կատաղի հսկայ, որ հազար աչք ունի, որ տեսնում է ամեն ինչ... որ ամեն տեղ է...

— Գործ եմ ուզում է՛ք, գործ, վերստին հեծեծաց Արութը, արդար աշխատանք, ես ի՞նչ հող տամ իմ գլխին:

— Ձէ, դու գործի մարդ չես, վերկաց գնա, ախպէր, ճամբու ծախսդ իմ վզին, միայն թէ շուտ հեռացիր... տղամարդ խօչես, կնիկ, կնիկ... երկու լակոտներն անգամ գետին գլորեցին և ջէրդ դատարկեցին... յետոյ մի բան կը պատահի, կ'ասես հարևան

էր, ընկեր, ազգական տէրութիւն չարեց...
քեզնից մարդ չի դուրս գայ...

Արութը չէր լսում նրան. վերստին յիշեց իր տունը. պառաւ մօրը, ճախարակը... մերկ երեխաներ, հարկ, պարտատէր. հեռանկարը զարհուրելի էր... նա մատով խաղում էր աւազի վրայ, Լուռ էին:

— Ձեմ ուզում գնալ էէ... չեմ ուզում, բայց ճարս ի՞նչ, էս ի՞նչ օր է, որ քաշում եմ մի ամիս... մեռայ թափառելով, հարցնելով, աղաչելով, գործ չը կայ. ես որ ջուրն ընկնեմ... ձեռքս նորից քո փէշն եմ ձգում, ախպէր, ոտքդ համբուրեմ, մի թող կորչեմ, մի գործ ճարիր ինձ, փողոց կ'աւելեմ, աղբ կը թափեմ, ծառայ կը լինեմ, միայն դատարկ ձեռքով յետ չ'երթամ... վերստին հեկեկոցը նրա կոկորդը խեղդեց, վերստին արցունքները թափուեցին:

— Էսի՛ր, ասաց Բուլատը, երբ Արութը հանգստացաւ, լսի՛ր, նաւը կը մեկնի երկու շաբաթից, ահա քեզ ապրուստի և ճանապարհածախսի համար, — նա մեկնեց միքանի թղթադրամ. և գնա՛, Աստուած քեզ հետ, քո մեղքը քո վիզը, ես ուզում էի քեզ հազարներ տալ, դու փախչում ես բաղդիցդ, վախկոտ, վախկոտ... դէ մնաս բարի: Եւ նա հեռացաւ հաստատ վճռական քայլուածքով:

Արութը յանկարծակիի եկաւ. նա այդ չէր սպասում և շուարած նայում էր մէկ ձեռքի փողին, մէկ հեռացող Բուլատի թիկունքին: «Ես ուզում էի քեզ հազարներ տալ» ապաց, ո՞ր տեղից, ի՞նչպէս... բայց Բուլատն ասաց, այս զարհուրելի, այս հզօր մարդը, որից դողում են փողոցի սրիկաներն անգամ: Հազարներ... տէր Աստուած... ալիքները քսւում էին ափերին և բոլորը միասին շշնչում էին «հազարներ...» և աւազը հեռացող Բուլատի ոտների տակ այնպիսի ձայն էր հանում, ասես կրկնում էր «հազար-հազար, զար, զար...»

Բուլատը գնում էր սակայն առանց յետ նայելու...

Ձը փորձել արդեօք բաղդը վերջին անգամ, և յետո՞յ տուն... գուցէ հազարներով...

— Թոր... Բնւատ...

Բուլատը յետ չը նայեց, նա գնում էր անհոգ ու սուլելով. նրա կարճ, լայն ու յաղթ իրանը մեղմիւ օրօրւում էր, և ոտների տակ աւազը խշխշում, ճռռում...

— Բնւատ, Արութը աւելի բարձր կանչեց.

Նա կանգ առաւ, ու յետ նայեց լուռ-թեամբ.

Արութը ձեռքով արեց և գնաց դէպի նա...

—Ես չեմ ուզում վերադառնալ:

Բուլատը քրքշաց, քրքշաց ու փորը բռնեց սաստիկ ծիծաղից:

—Դու կատարեալ օյին ես... չեմ ուզում գնալ... ապա լրջութեամբ աւելացրեց... հաւատում ես ինձ...

—Հաւատում եմ...

—Համբերիր էլի մի երկու շաբաթ... և ոչ մի արցունք, լսում ես:

Արուսթը վերստին քայլում էր նրա յետևից հնազանդ ու խեղճ:

Նա մնաց վերջին անգամ փորձելու իր բաղդը...



VIII.

Բուլատն ասում էր.

—«Այն մարդը» միլիոն ունի, եթէ մեզ յիսուն հազար տայ, այդ նրա համար յիսուն կուէկ է. իսկ մենք տաս հոգի ենք, իւրաքանչիւրիս հինգ հազար ըուբլի... շատ չէ, լսում ես, Արուսթ:

Արուսթը գլխով լուռ նրան արեց.

—Արդ՜ար աշխատանք, շարունակեց Բուլատը, իսկ նա այդ մարդը արդար աշխատանքով է դիզել այդքանը... ողջ կեանքդ շան պէս պիտի թափառես դռներում մի կտոր արդար հացի համար... հու՞ն ես արդար հացի տիրու... սև աղուէսի մորթի է դարձել մի կտոր արդար հացը... այնպէս չէ Արուսթ:

Իհարկէ այդպէս է. Արուսթը վերստին գլխով արեց, նա էլ չէր բողոքում այս սարսափելի մարդու մտքերի դէմ... հինգ հա-

զար և դէպի տուն... մեղքն ի՞նչ է, այն-
քան ունի «այն մարդը». և ինչեր կ'անի
Արութը այդ փողով... Նա կ'առնի նախ մի
զոյգ եզ, յետոյ մի քանի կով... յետոյ մի
այգի, յետոյ... տէր Աստուած, վերջ չը կայ,
հինգ հազար էէ... ծով փող...

Եւ սիրտը թրթռում էր ցնծութիւնից,
նա լռելեայն օրհնում էր «այն մարդուն»,
նրա կեանքը, նրա հարստութիւնը. օրհնում
էր նրա սիրունուն անգամ, որ աղանջներից
հազարներ է կախել, նա պատրաստ էր սի-
րել, պաշտել նրանց, միայն թէ այդ փողը
տան... Յետոյ այս Բուլատը, իր բարի հրեշ-
տակը՝ Աստուած հանեց նրան իր ճանապարհ-
հին... ի՞նչ ուզի կ'անի, մարդ չի, աժդա-
հա...

Ուշ գիշերային հովը փչում էր, խոտերը
բաց դաշտում սլօլում էին, համարեա ցուրտ
էր. նա կծկուեց և աղանջ էր դնում: Հե-
ռու տնքաց մի գազան, տնքաց ու լռեց:
Դէպի աջ ձոր էր և այնտեղ շառաչում էր
գետակը. դէպի ձախ՝ լերի, ժայռոտ լեռն
էր. նրանք սպասում էին մի ժայռի տակ,
միւս ընկերները պիտի ուր որէ բերէին այն
«մարդուն» այստեղից աւելի հեռու, թա-
գստոցը տանելու համար: Արութը անյոյզ,
անվախ էր սպասում, Բուլատը կար հետը.

և յետոյ ամբողջ այս գործի մէջ ուրիշ ո-
չինչ չէր տեսնում, բայց եթէ մի պարզ
հաշուետուութիւն. ասես «այն մարդը» իր
յօժար կամքով էր գալու և բերելու էր Ա-
րութին հինգ հազարը, այն բարի, այն լաւ
մարդը, որ հինգ հազարը կը տար, ինչպէս
հինգ կոպէկ:

Բուլատը ներվային ու անհանգիստ գը-
նում գալիս էր աղանջները սրած, իսկ Ա-
րութը լուռ՝ խաղում էր հինգ հազարի հետ,
որ նրան ներկայանում էր, որպէս մի կոյս
դեղին ոսկի զրնգան, փայլուն...

...Իսկ եթէ չը տայ, անցաւ յանկարծ
նրա մտքով:

— Բուլատ, իսկ եթէ չը տայ...

Հարցը սև ամպ էր մտքերի պայծառ
հորիզոնի վրայ:

— Կը տայ, դաժան վճռականութեամբ
պատասխանեց Բուլատը և շարունակեց քայ-
լել աւելի արագ-արագ. երևի նրա հաշուով
ուշանում էին և Բուլատի անհանգստու-
թիւնն աճում էր. նա նոյն իսկ, սկսեց քաշ-
քշել, փետել իր բեխերը ինչպէս սովորու-
թիւն ունէր երբ զայրացած էր:

Արութը սակայն գոհ չը մնաց նրա
պատասխանից, հարցը ցաւոտ ու անխու-
սափելի յանկարծ թառել էր նրա ուղեղի

վրայ գիշատիչ թռչնի պէս ու կտցում էր, կտցում էր...

— Ձէ, բան է էլի, ասում եմ... իսկ եթէ չը տայ, կրկնեց Արուսթը:

— Կը տայ քեզ ասում եմ, իշի գլուխ, կըտայ, որոտաց Բուլատը ոտքով կատաղօրէն դոփելով գետինը:

Նրանք ուշանում էին... Բուլատը զարհուրելի էր... Արուսթը լսեց, կծկուեց, խեղճացաւ, բայց հարցը մնաց հարց, ահաւոր, չաբազուշակ, որ քամում էր Արուսթի ուղեղը և տիրաբար պատասխան պահանջում. նրա հոգին ցաւում էր, կոկորդը սղմում, ճակատը այրում...

«Իսկ եթէ չը տայ... իսկ եթէ չը տայ»...

Այլ ևս չէր համարձակում հարցնել. Բուլատի զայրոյթից սոսկում էր. նրա աչքերի կատաղի փայլը խաւարի մէջ անգամ նա տեսնում էր... բայց տեսնում էր միևնոյն ժամանակ մի ուրիշ բան, մութ, անձև, որ եռում էր Բուլատի զայրոյթի տակ, տեսնում էր ու դողում...

«Իսկ եթէ չը տայ... իսկ եթէ չը տայ...»

Երկիւղի հետ մեծանում էր նաև այն խաւար սարսափը տեսնելու ցանկութիւնը, իր կեանքն ու մահը ասես նրանից էր կախ-

ւած: Եւ նա վճռեց մի յետին փորձ անել, այն ևս անորոշ բանը պարզ ու որոշ տեսնելու համար:

— Իհարկէ կը տայ, սկսեց նա դասը վատ սերտած աշակերտի պէս, բայց այն եմ ասում, որ պատահում են այնպիսի թարս, յամառ մարդիկ... Թէ փողը՝ թէ հոգին... Թարսուեց ու չը տուեց, հա, այդ եմ ասում էէ... Ի՞նչ արած. խօ մարդուն չենք սպանի... գլուխը քարը, թող կորչի երթայ... այնպէս չէ, Բուլատ... և նա ժպտաց խաւարի մէջ, ու կ'ուզէր, որ ընկերը այդ ժպտը տեսնի:

Կարծես ամպ ճայթեց... Բուլատը կանգ առաւ, հրացայտ աչքերով նրան նայեց, ապա թափով մօտեցաւ մօտ, մօտ, բարձրացրեց ձեռքի ատրճանակի փողը նրա քթի տակ, ատամները կրճտացրեց և դաժան, խեղդուած ու սպառնալի ասաց հեալով.

— Կ'սպանենք, եթէ չը տայ, իշի գլուխ, հասկանո՞ւմ ես, կ'սպանենք և քեզ էլ հետը, եթէ իսկոյն չես լռի...

Արուսթը սոսկումով լսեց նրա ատամների ճռոռոցը, զգաց նրա տաք հեքը իր այտերին, տեսաւ աչքերի փայլը, և բնազդօրէն գլուխը յետ ձգեց թափով դէպի ժայռը,



գանգը դարկուեց քարին, տեղ չը կար թա-
ղուելու, նա շշմեց ցաւից ու լսածից.

— Կ'սպանենք... հեկեկաց նա, անմեղ
տեղը... արդար մարդուն... Բուլատ, Բու-
լատ, այդ ինձ չէիր ասել... ինչո՞ւ առաջ
չ'ասիր ինձ, անողորմ... մարդաս...

Բուլատը չը թողեց նրան վերջացնել...
պատասխանը եղաւ մի ուժգին ապտակ, որ
քիչ մնաց Արուսթի աւուաները փշրէր. նա ե-
րեւաց, արիւնը ցասումով գլուխը խփեց,
աչքերի առաջ կանաչ շրջաններ վառուեցին
և նա ատրճանակի փողից բռնած բարձրաց-
րեց Բուլատի գլխին. վերջինս կանխեց նրան,
թափով հարուածեց նրա դաստակին, ատըր-
ճանակը թռաւ, կորաւ խաւարի մէջ: Եւ նոյն
վայրկենին լսուեց մի սուր սուլոց. Բուլա-
տը պատասխանեց նման սուլոցով, ու դուրս
թռաւ ընդ առաջ. ձիու ոտնաձայն, խեղդուկ
խօսակցութիւն.

Եկան, բերին «այն մարդուն», մտածեց
Արուսթը, նա դողդողում էր կանգնած տե-
ղում, միշտ ժայռին յենուած: Եկողները մի
քանի հոգի էին և նրանց մէջ ևս «այն մար-
դը», որին փախցրել էին, և որ պէտք է
տար յիսուն հազարը:

...«Իսկ եթէ չը տայ... իսկ եթէ չը տայ...

— «Կ'սպանենք», հնչում էր աւանջ-
ներում Բուլատի դարհուրելի ձայնը:

Արուսթի դողն այնքան մեծացաւ, որ
ատամներն իրար էին դարկում... գլխում
քաօս էր և այդ քաօսի վրայ իշխում էր ճա-
կատագրական, անողորմ հարցը. «Իսկ եթէ
չը տայ...»

Յետոյ մի անյաղթելի պահանջ գգաց
նորից տեսնել «այն մարդու» բեխերը, միայն
բեխերը. և Արուսթը մի քանի քայլ արեց
առաջ խաւարի մէջ փնտրելով «նրա» անօ-
րինակ, ցից բեխերը...

Երկրորդ միտքն էր բարձրաձայն ձշալ,
այնպէս որ խաւարը դողայ, ողջ աշխարհը
լսի:

— Է՛յ, խեղճ մարդ, քեզ կ'սպանեն,
կ'սպանեն, կ'սպանեն...

Բերանը չէր բացւում, միայն ատամ-
ները չխկչխկում էին, ծնկները դողդողում
էին և նա վերստին յենուեց քարին, մինչ-
դեռ Բուլատն ու իր ընկերը ինչ որ խոր-
հում էին, փափսում էին խաւարի մէջ:

Եւ յանկարծ մի խումբ ձիերի սալա-
սմբակ դրոփիւն հեռւում...

— Ո՞վ էք, լսուեց հեռուից:

Բուլատն առաջինը հասկացաւ վտանգը.

— Փախէք, հրամայեց նա. խումբը վայր-

կենապէս ցրիւ եկաւ. Արութը քարացել էր իր տեղում, նա կարծես զառանցում էր. Բուլատը սրնթաց անցաւ նրա առաջով, թափով շարտեց նրան իր հետ.

— Փախիր, շուն շան... խուճապ էր.

Արութը բնագոգօրէն նետուեց դէպի ձորը, վազեց մինչև քարափը, և երբ պատրաստուում էր ցատկել վար, մի ուժեղ հարուած, ինչպէս ժայռի մի կտոր, դիպաւ թիկունքին և նա գլխի վայր զլորուեց դէպի մութ անդունդը... Եւ անկման պահուն մի հատիկ միտք կար գլխում.

«Իսկ եթէ չտայ»... այս բառերը կրկնում էր ինչպէս յանգերգ...

Հրացանները ճարճատում էին խաւարի մէջ...

Յետոյ ամեն ինչ լռեց...



IX

Արութն ընկած էր ժայռի տակ, փըշրուած ու արիւնլւայ, անթարթ աչքերը յառած երկնքին, ուր աստղերը թարթում էին մեղմիւ:

Եւ նրա կողքին հեծեծալով գետակն էր պատմում խաւարին մի հին ցաւ, որ ոչ սկիզբ ունէր, և ոչ վախճան:

Գնդակը թիկունքից դիպչելով, թափ անցել էր կրծքից, ոտները փշրուած էին **գահավէժ անկումից** և պատառուած գանգը **արծիճի** պէս ծանր, թաղուել **հողի մէջ**. **Նա** զգում էր, ինչպէս **թանձր**, լպրծուն, տաք **հեղուկը** թիկունքի տակ կամաց-կամաց լըճանում է և մահագութօրէն դուրեկան մի զգացմունք համակում էր նրա ամբողջ էութիւնը... Ամբողջ մարմինը լողում էր այդ **գաղջ**, ախորժելի **հեղուկի մէջ**. ամեն կողմ նա էր, այդ դուրեկան **հեղուկը** և՛ թիկունքի տակ, և գլխի տակ, և կրծքի ու ձեռ-

ների վրայ, և՛ բերանում, շրթունքների վրայ... ու լաւ էր... լաւ էր... ցաւ չէր զգում, այլ հաճոյք...

«Մեռնում եմ», մտածեց նա, և երջանիկ էր, որ մեռնում էր, այսպէս, առանց արիւն թափելու...

«Տեսնում ես, մայրիկ, ես մարդ չեմ սպանել... մեռնում եմ արդար... ձեռներս կարմիր են... չը վախենաս... այդ ուրիշի արիւն չի, իմ արիւնն է... արդար արիւն...»

Յետոյ անաւոր անցքի յեղեղումները նրա մթազնած յիշողութեան մէջ դառնում էին կտոր կտոր, վայրիվերոյ, ինչպէս շրջթայագերծ գազանների մի վոհմակ, որոնք ցատկոտելով, ճշալով, ոռնալով անցնում էին աչքի առաջից, առանց որ, Արութը կարողանայ նրանց նայել, Եւ բոլորը իրար յետևից գնում էին գահավէժ ընկնում մի սև անդունդ, որի խորքում փայլում էին երկու կատաղի աչքեր, անագին, լափող բոցեր... քաշում էին Արութին... Յետոյ շիկահեր գլուխներ, կանացի մարմիններ, մերկ, սպիտակ, թրթռուն, լիքը ստինքներ, որոնք փախչում էին ձեռքի տակից և ցցւում պագշոտ կատաղութեամբ ու ժպտում... իսկայեղօրէն իրար գալարուած իրաններ, սրունքներ, իրար փակուած բազուկներ, պա-

րանոցներ, կրծքեր... և բոլորը քաշքշում, տրորում, կծոտում են իրար, դարձեալ տրիւնը ժայթքում է շատրուանի պէս, մաղւում է գլուխներին կարմիր անձրևով, ամենքը կատաղօրէն եռում են, տնքում, ճըշում, մոմռում, քրքշում, լալիս... կրքի մրրիկով նրանք պարում են մահուան ու սոսկումի պարը...

«Ծովիկ, Ծովիկ... Բուլատը տարաւ ինձ այնտեղ... ես այնպէս մաքուր եմ... այնպէս արդար... լալիս ես... ինչո՞ւ... տես ինչպէս լողանում եմ... ո՛չ մի կեղտ չի մնայ վրաս...»

Մի գաղան տնքաց վերստին, ապա երկար երկար կաղկանձեց հեռում: «Բաղցած բորենի է» մտածեց Արութը, պարզ ու յստակ: Գետը հեկեկում էր, ծեծում ժայռերը, պատմում իր ցաւը. և նրա ձայնը հնչւում էր Արութի ալանջներում որպէս մի անորոշ զրնդիւն:

...«Բուլատ, իսկ եթէ չը տո՞յ...»

Ճախարակը ճռռում էր մրոտ խրճի մէջ, պառաւ մայրը մանում էր, մանում էր և Ծովիկը կարում էր անվերջ, ինչո՞ւ վեր չեն նայում տնաշէնները... Ղժգոհ ես, մայրիկ... հաւատա մայրիկ, ձեռքերիս վրայ իմ արիւնն է... չեմ հաւատում, գլուխդ օրօ-

րոճմ ես... այ, հոտ առ, մայրերը կը ճա-
նաչեն զաւակի արիւնը հոտից, այնպէս չէ...
տեսա՞ր, իմ արիւնն է... ճո՛ւ... ճո՛ւ... ճո՛ւ...
այն Ծովիկն է կանչում ճտերին և նրանց
հետ վազվզում են երեխաները... հուճե՛ք ա-
լիկներս... Եւ նրա աչքերից ցայտեցին յե-
տին արցունքները և լճացան բիբերի վրայ...
Գետը լալիս էր... աստղերը թարթում
էին...

Մի սև բան մօտեցաւ... չէ, կանգ ա-
ռաւ... նայում է, աչքերը փայլատակում
են... Բուլատն է... մօտեցաւ, հոտոտեց...
ահա նա լակում է իր շուրջը լճացած թան-
ձրը հեղուկը... իր տաք արիւնը... գա՛յլ է,
բորենի, թէ՛ քաղցած, թափառական շուն.
միևնոյն չէ... քաղցած է, թող լակի...

Արութի աչքերը փակուեցին, գետն էլ
չէր լալիս. աստղերն էլ չէին թարթում.
միայն վերջին անգամ աղօտ կերպով զգաց
գազանի տաք հեքը իր սառը երեսին... և
սև յաւիտենական անդունդի մէջ ընկաւ
զահավէժ, այլ ես երբէք, երբէք չը բարձ-
րանալու համար... Լուսաբաց էր:

Ոստիկանները լուսաբացին գտան նրա
դիակը:

Եւ հեռո՛ւ, հեռո՛ւ, ծովերից ու սարե-
րից այն կողմը, մրոտ ցածրիկ խրճիթի մէջ
մի պառաւ կին մանում էր մի հին, յոգնած
ճախարակ, մարած աչքերով աշխատում էր
ջոկել բարակ թելերը, որ նրանք հաւասար
լինին, կոկ, սիրուն... Ո՛հ, անգօր էին աչքերը,
լինին, կոկ, սիրուն... Ո՛հ, անգօր էին աչքերը,
թելերը մերթ հաստ էին, մերթ բարակ. ի-
նչի՞նչ դառնում էր, լարը հեծեծում, ճախա-
րակը լալիս էր աւելի ցաւոտ, աւելի աղե-
խարշ, և պառաւ մայրը մեղմիւ, նուաղած
ձայնով երգում էր իր հին, վշտոտ երգը.
երգում էր ու նայում դրանը.

«Սև սարերից դումանն իջաւ դաշտերին.

«Ո՛վ է լալիս հօնքուր, հօնքուր էն ձորում.


«Անճար եղնիկ, մատաղ աչքիդ արցունքին,


«Ո՛ր չար ձեռքից նետը դիպաւ քո սրտին...»

The first thing I noticed when I stepped out
 into the morning sun was a sense of freedom.
 The air was crisp and clean, a stark contrast to the
 stuffy atmosphere of the city. I took a deep breath,
 savoring the scent of fresh grass and distant flowers.
 The sun was just beginning to rise, painting the sky
 in soft, warm hues of orange and pink. I walked
 along the path, feeling the gentle breeze on my face.
 The world seemed so peaceful, so full of promise.
 I had found a place where I could truly be myself,
 where the worries of the world were left behind.
 It was a beautiful morning, and I knew I was
 exactly where I needed to be.

CHAPTER II

The second day of my journey was just as
 wonderful as the first. I had decided to explore
 the nearby hills, and the view was absolutely
 breathtaking. The landscape was a mix of rolling
 green fields and dense forests, with small villages
 nestled in the valleys. I had heard that the weather
 was perfect, and it truly was. The sun was
 shining brightly, and the air was warm and
 inviting. I had found a perfect spot to set up
 camp, and I was looking forward to a peaceful
 night's sleep under the stars.





ՀՀ Ազգային գրադարան



NL0321477

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

Առանձին գրքերով լոյս տեսած երկերը

Հոօ կինը	— 40 կ.
Մըրիկի սուրբը	1 — »
Իտալիայում (պատկերազարդ)	1 50 »
Արագը	— 80 »
Լոուիսիան	— 60 »
Ազատութեան ճանապարհին	— 80 »
Արցունքի հովիտը	— 35 »
Կեանքի վէպը	— 75 »
Գայլերը ոռնում էին	— 10 »
Ժողովածու երկերի հատոր I Պատկերներ	
Բ. հրատարակութիւն	1 — »
Ժողովածու երկերի հատոր II Խեղճերը	
Բ. հրատարակութիւն	— 75 »

Դիմել հեղինակին. Тифлисъ, Бебутовская № 60.